ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2048 Ա/2 «02» սեպտեմբերի 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2505-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցը հաստատելու մասին» N 2505-Ա/2՝ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SVAJYAN ARAKSIA 6304780168 **Ա"Սվաջյան**

/պարտականությունները կատարող/

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի սեպտեմբերի -22---ի N 2048-Ա/2 հրամանի

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. 2025թ.-ի մարտի 5-ին ընդունված «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ պետական երիտասարդական քաղաքականությունը որպես Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած ծրագրերի և միջոցառումների համակարգ միտված է երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը և այդ լուծումների շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ընդգրկվածության ապահովմանը և որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանում է, որ երիտասարդության ոլորտում իրականացվող ծրագրերին առավելագույն մասնակցության ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել յուրաքանչյուր երիտասարդի զարգացման առանձնահատկություններին համապատասխան պայմաններ և հարմարեցված միջավայր: («6) ներառականություն՝ յուրաքանչյուր երիտասարդի համար, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովում, երիտասարդության ոլորտում իրականացվող ծրագրերին առավելագույն մասնակցության ապահովմանն ուղղված քայլերի իրականացում:» Օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ կետը սահմանում է երիտասարդական կենտրոն հասկացությունը որպես պետության կամ համայնքի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք, կազմակերպում է ինտելեկտուալ ժամանց և իրականացնում է պետական երիտասարդական քաղաքականությունից բխող ծրագրեր և միջոցառումներ:
2. Սույն ուղեցույցը ապահովում է Օրենքի վերոնշյալ և հարակից կետերի իրականացումը:
3. Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցը մշակվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական

կազմակերպության կողմից՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի № 2505-Ա/2 հրամանով հաստատված համանման ուղեցույցը և նպատակ ունենալով լրամշակել այն:

4. Ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի, Վորլդ Վիժն Հայաստանի և Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի հետ համատեղ:
5. Ուղեցույցը նախատեսված է պետության, համայնքի, մասնավոր հատվածի կողմից կամ նրանց երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված երիտասարդական կենտրոնների, ոլորտային կազմակերպությունների, մասնագետների և փորձագետների, երիտասարդական աշխատողների, ուսուցանողների համար:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

6. 20-րդ դարի երկրորդ կեսը «երիտասարդության դարն էր», երբ երիտասարդները դարձան առավել տեսանելի որոշակի գործընթացների արդյունքում, ինչպիսիք են կրթական բարեփոխումները, պետական միջամտությունը, աշխատանքային պայմանների կանոնակարգումները, անչափահասների արդարադատության համակարգի վերակազմավորումը, ժամանցի ճանաչումը և այլն: Այս ամենը նպաստեց «երիտասարդության» հայեցակարգի ստեղծմանը[1]: Ի սկզբանե երիտասարդներն առավելապես համարվում էին խնդիրներ առաջացնող կամ խնդիրներ ունեցող խումբ: Սակայն, երիտասարդության ժամանակակից սահմանումներն ավելի բաց են ու ներառում են առավելապես «երիտասարդները՝ որպես ներուժ» մոտեցումը: Այժմ ավելի հաճախ է երիտասարդությունը դիտարկվում ոչ թե որպես խումբ, որի խնդիրները ենթակա են լուծման, այլ որպես անգնահատելի ռեսուրս, որը պետք է զարգացնել: Ըստ այս հայեցակարգային մոտեցման՝ երիտասարդները ստանում են սուբյեկտայնություն, դառնում են հասարակության զարգացման հիմնահարցերի լուծման կարևոր սոցիալական դերակատար:
7. Այս հայեցակարգային մոտեցումն է դրված Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության հիմքում: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրի հիմքում շեշտադրվում է,

[1] Greig A., Mackay T. and Taylor J. (2013), Doing research with children, a practical guide 3rd edition, Sage publications LtD, Los Angeles, London, New Delhi, Singapore, Washington DC.

որ յուրաքանչյուր պետության տնտեսական, սոցիալական, հոգևոր կայուն զարգացման, մշակութային ժառանգության պահպանման, կրթական և գիտական ներուժի հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման գործընթացներում երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժային ռեսուրս, առանձնահատուկ դեր ունի[2]:

8. Կառավարության ծրագրում առանձնահատուկ շեշտադրվում է **իրենց բնակության վայրերում** երիտասարդների ներուժի բացահայտումը և զարգացումը, հետաքրքրությունների իրացման նպատակով ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման հնարավորությունների ստեղծումը, որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության խրախուսումը, ինչպես նաև աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացումը՝ ոչ ֆորմալ կրթության գործիքակազմի կիրառման, կամավորության խրախուսման և այլ միջոցներով:
9. Մեկ այլ փաստաթղթով՝ Հայաստանի՝ մինչև 2050 թվականը վերափոխման ռազմավարությամբ, Կառավարությունը՝ ի դեմս առաջին մեգանպատակի, ենթադրում է «գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների՝ համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն»[3]:
10. Այս նպատակներին հասնելու համար՝ երիտասարդների պարագայում, առաջնային է **իրենց ներուժի բացահայտման, կարողությունների շարունակական զարգացման, ինքնաիրացման, ակտիվ քաղաքացիության դրսևորման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումը**:
11. Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում հենց նման միջավայրն է հնարավորություն տալիս շարունակական ու արդյունավետ դարձնել երիտասարդներին ուղղված ծառայությունները, կամ նրանց հետ և նրանց կողմից իրականացվող նախաձեռնությունները: Նման միջավայր են հանդիսանում երիտասարդական կենտրոնները: Հայաստանում սկսած 2018 թվականից տարբեր ձևավաչափերով ստեղծվել են երիտասարդական աշխատանքի ծառայության մատուցման մասնագիտացված երիտասարդական կենտրոններ (այսուհետ՝ կենտրոն), ինչպիսիք են՝ երիտասարդների տները, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ստեղծված երիտասարդական կենտրոնները և այլն:

---

[2] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, էջ 71, https://www.gov.am/files/docs/4586.pdf [31.08.2024]

[3] Հայաստանի՝ մինչև 2050 թվականը վերափոխման ռազմավարություն, էջ, 55, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf [31.08.2024]

Միևնույն ժամանակ Հայաստանում ստեղվել են և շարունակում են ստեղծվել կենտրոններ/երիտասարդական տարածքներ (այսուհետ՝ տարածք), որտեղ երիտասարդները իրենց սեփական նախաձեռնությամբ, երիտասարդական աշխատանքի սկզբունքով իրականացնում են երիտասարդական ծրագրեր՝ ուղղված երիտասարդների ներուժի բացահայտմանը և զարգացմանը, նրանց հետաքրքրությունների իրացման նպատակով ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը, որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության խրախուսմանը:

12. Սույն ուղեցույցը սահմանում է այն հիմնական դրույթները, որոնցով ցանկալի է առաջնորդվել երիտասարդական միջավայր գործարկելիս՝ դրանք համապատասխանեցնելով ներկայումս առկա լավագույն փորձերին ու էթիկական նորմերին: Չնայած ուղեցույցն ունի խորհրդատվական բնույթ, այնուամենայնիվ, այն նպատակ ունի ապահովելու հստակ ու միասնական մոտեցում և տալու ուղենիշային պատկերացումներ երիտասարդական միջավայրի ընդհանուր նկարագրի, նպատակների ու գործառույթների վերաբերյալ, ինչպես նաև ծառայել որպես մեթոդական ուղեցույց՝ երիտասարդական կենտրոնների և երիտասարդական տարածքների գործունեության արդյունավետ կազմակերպման և դրանց կողմից մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովման համար:
13. Ուղեցույցը նախատեսված է պետության, համայնքի, մասնավոր հատվածի կողմից կամ նրանց երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված մասնագիտացված երիտասարդական կենտրոնների, երիտասարդական տարածքների, ոլորտային կազմակերպությունների, մասնագետների և փորձագետների, երիտասարդական աշխատողների, ուսուցանողների համար:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Սույն ուղեցույցի շրջանակներում, հիմք ընդունելով ոլորտային որոշ օրենսդրական փաստաթղթեր, թեմատիկ գրականություն ու Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանքի շրջանակներում երիտասարդական կազմակերպությունների կողմից իրականացվող երիտասարդական ծրագրերի փորձը, կիրառված հասկացությունների համար նկատի է առնվում հետևյալը՝

1) **Երիտասարդ՝** 13-ից մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ:
2) **Երիտասարդական աշխատանք՝** երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանք: Երիտասարդական աշխատանքը միտված է երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային, սոցիալական բնույթի

հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը:

3) **Երիտասարդական աշխատող՝** անձ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ վճարովի (համայնքային ծառայության կամ վճարովի ծառայությունների մատուցմամբ կամ աշխատանքային պայմանագրային հարաբերություններով) կամ կամավորության սկզբունքով:

4) **Երիտասարդական ծրագիր՝** պլանավորված միջոցառումների համակարգ՝ միտված երիտասարդների կարիքների, կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կրթական, մշակութային և սոցիալական բնույթի այլ հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը և այդ լուծումների շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ընդգրկվածության ապահովմանը և որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը:

5) **Երիտասարդական կազմակերպություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որի կանոնադրությամբ նախատեսված է երիտասարդական աշխատանքի և երիտասարդական ծրագրերի իրականացումը և որի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են, իսկ անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում՝ կառավարման մարմնի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են:

6) **Երիտասարդական միջավայր՝** երիտասարդի զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմաններին հարմարեցված միջավայր, որը նպաստում է երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, երիտասարդների հնարավորությունների օգտագործմանը, երիտասարդական ծառայությունների հասանելիությանը: Երիտասարդական միջավայրը խրախուսում և արժևորում է երիտասարդներին՝ խթանելով նրանց սոցիալական և հուզական ինտելեկտի զարգացումը: Այս համատեքստում միջավայրը պետք է դիտարկվի առավել լայն իմաստով: Այն ներառում է սոցիալական բաղադրիչ (օրինակ՝ հարաբերություններ հասակակիցների և մեծահասակների հետ), հանրային նորմեր (մոտեցումներ, դիրքորոշումներ, դավանանք և այլն), համակարգային բաղադրիչ (քաղաքականություններ, ինստիտուտներ, ընթացակարգեր, ծրագրեր և այլն) և ֆիզիկական բաղադրիչ (օրինակ՝ անվտանգ և հարմար միջավայր):

7) **Երիտասարդական միջոցառում՝** երիտասարդական ծրագրերի իրականացմանն ուղղված պլանավորված գործողություն, որն իրականացվում է երիտասարդների համար, երիտասարդների կողմից կամ նրանց մասնակցությամբ:

8) **Երիտասարդական նախաձեռնող խմբեր՝** իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող երիտասարդների ինքնակազմակերպման արդյունքում ձևավորված խումբ, որի գործունեությունը նպաստում է պետական երիտասարդական քաղաքականությունից:
9) **Երիտասարդների մասնակցություն՝** երիտասարդների և մեծահասակների միջև գործընկերություն, որը միավորում է երիտասարդության առկա ներուժն ու հմտությունները մեծահասակների փորձի և իմաստության հետ, որտեղ յուրաքանչյուր կողմն առաջարկություններ ու լուծումներ տալու և որոշումների կայացման հավասար հնարավորություն ունի, ապահովվում է քաղաքականությունների և ծրագրերի համատեղ մշակումը, իրականացումը և գնահատումը, ճանաչվում և արժևորվում է յուրաքանչյուրի ներդրումը:
10) **Երիտասարդների ներգրավում՝** երիտասարդների ու մեծահասակների միջև մտածված, փոխադարձ հարգալից համագործակցություն, որի միջոցով պատասխանատվությունն ու իշխանությունը կիսվում են, ծրագրերի, ռազմավարությունների, քաղաքականությունների ձևավորման և իրականացման մեջ գնահատվում է յուրաքանչյուրի ներդրումը, գնահատվում են նաև երիտասարդների գաղափարները, հնարավորությունները, հմտություններն ու ուժեղ կողմերը:
11) **Երիտասարդություն՝** 13-35 տարեկան տարիքային շեմն ընդգրկող սոցիալ-ժողովրդագրական խումբ, որն ունի իրավունքներ, հատուկ պահանջմունքներ ու կարիքներ, հետաքրքրություններ ու ակնկալիքներ, ձգտումներ ու ներուժ, տարիքային, սոցիալ-հոգեբանական ու այլ տիպի առանձնահատկություններ:
12) **Քաղաքականություն** (policy)՝ ռազմավարական նպատակների, խնդիրների և առաջնահերթությունների ամբողջություն, որը գործնականում մշակում և իրականացնում է պատասխանատու գերատեսչությունը կամ կազմակերպությունը: Քաղաքականությունը ներառում է համապատասխան ֆինանսական միջոցներ, որոնք օգտագործվում են ռազմավարական խնդիրների լուծման համար, և ընդհանուր սկզբունքներ, որոնցով պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները կամ գործընթացին մասնակից կազմակերպությունները առաջնորդվում են իրենց գործունեության ընթացքում:
13) **երիտասարդական կազմակերպություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որի կանոնադրությամբ նախատեսված է երիտասարդական աշխատանքի և երիտասարդական ծրագրերի իրականացումը, և որի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են, իսկ անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում կառավարման մարմնի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են:

4. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

15. Հայաստանում անկախության տարիներից ի վեր գործում են բազմաթիվ պետական և հասարակական կազմակերպություններ, որոնց հիմնական թիրախային խումբը երիտասարդներն են կամ գործունեության հիմնական ուղղությունն առնչվում է երիտասարդության հարցերին:
16. Հայաստանում երիտասարդական աշխատանք սովորաբար իրականացնում են՝
    1) երիտասարդական կազմակերպությունները,
    2) կրթական կառույցներում կամ դրանց կից գործող երիտասարդական կազմակերպությունները (օրինակ՝ աշակերտական և ուսանողական խորհուրդները),
    3) քաղաքական կուսակցություններին կից գործող երիտասարդական կազմակերպությունները,
    4) կրոնական կառույցներին կից գործող երիտասարդական կազմակերպություններն ու միությունները,
    5) երիտասարդական ակումբները, խմբերն ու միավորումները,
    6) պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին կից գործող երիտասարդական միավորումները (օրինակ՝ երիտասարդական խորհուրդները):
17. Վերոնշյալներից, բնականաբար, անհամեմատ մեծ ծավալով երիտասարդական աշխատանք իրականացնում են երիտասարդական կազմակերպությունները, որոնք ազդեցություն ունեն ինչպես տեղական, այնպես էլ ազգային ու միջազգային մակարդակում:
18. Երիտասարդական կազմակերպություններից որոշները տեղական կամ միջազգային աջակցությամբ գործարկել են երիտասարդական կենտրոններ ու տարածքներ, որոնք ունեն իրենց առանձնահատուկ նպատակները, գործունեության մեթոդներն ու ձևերը:
19. Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսվում է մինչև 2026 թ. հիմնել 25 երիտասարդական կենտրոն՝ մարզերում երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման համար երիտասարդական միջավայրի ձևավորման նպատակով: Հաջորդ քայլով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պարբերաբար հայտարարել է «Երիտասարդական կենտրոնների ստեղծման» պետական դրամաշնորհային մրցույթներ: Արդյունքում՝ պետություն, համայնք և ոչ պետական կազմակերպությունների եռակողմ համագործակցությամբ ՀՀ տարբեր մարզերում ստեղծվել են երիտասարդական կենտրոններ:
20. Սակայն, այստեղ կարևորն այն է, որ թե՛ այլ միջոցներով, թե՛ պետական աջակցությամբ ստեղծված կենտրոնների հիմնման ու գործունեության վերաբերյալ ոլորտային դերակատարների մոտեցումներն ու ընկալումները, երբեմն, իրարից բավականին տարբեր են:

21. Հենց այս պատճառով էլ կարևորվում է սույն ուղեցույցի հրապարակման ու կիրառման անհրաժեշտությունը:

5. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ

22. Երիտասարդական միջավայրը հանդիսանում է տվյալ համայնքի կամ բնակավայրի երիտասարդների իրազեկման, ներուժի բացահայտման, կարողությունների շարունակական զարգացման, ինքնաիրացման, սոցիալականացման, ակտիվ քաղաքացիության դրսևորման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման, իրենց խնդիրների և մտահոգությունների հասցեագրման համար անհրաժեշտ միջավայր:
23. Ակնկալվում է, որ երիտասարդական միջավայրում հանրային ու մասնավոր միջոցներով կիրականացվեն սոցիալական, տնտեսական, կրթամշակութային, բնապահպանական, ձեռներեցության խրախուսման, ակտիվ քաղաքացիության զարգացման, առողջապահական և այլ ուղղություններով ծրագրեր:
24. Երիտասարդական միջավայրի գործարկումը համայնքում կհանդիսանա խթան, որպեսզի երիտասարդները՝ որպես երկրի զարգացման համար կարևոր ներուժային ռեսուրս, կարողանան առավելագույնս օգտվել առկա հնարավորություններից և/կամ դառնան նոր ծրագրերի ու նախաձեռնությունների ակտիվ մասնակիցներ ու շահառուներ:
25. Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, տվյալ երիտասարդական միջավայրի առաքելությունից, իր թիրախ երիտասարդների կարիքներից ելնելով, կարելի է առանձնացնել հնարավոր նպատակների ու ակնկալիքների այն փաթեթը, որին կարող է միտված լինել այդ միջավայրը:
26. **Հնարավոր նպատակների մեջ կարող են լինել, սակայն չսահմանափակվել, հետևյալ ուղղությունները՝**

1) Նպաստել երիտասարդների տեղեկացվածության ու իրազեկվածության բարձրացմանը:
2) Աջակցել երիտասարդների անձնային և հոգևոր աճին:
3) Աջակցել երիտասարդների զարգացմանն ու ինքնուրույն դառնալուն:
4) Աջակցել երիտասարդների ինքնագնահատականի և ինքնավստահության զարգացմանը:
5) Ստեղծել նոր գիտելիք ստանալու ու հմտություն ձեռք բերելու հնարավորություններ:
6) Զարգացնել անձնական և սոցիալական հարաբերությունների կարգավորման և կառավարման ունակությունները:
7) Ստեղծել հնարավորություններ երիտասարդների որակյալ ժամանցի համար:
8) Ստեղծել նոր արժեքավոր փորձառությունների հնարավորություններ:

9) Սերմանել ու զարգացնել սոցիալական գիտակցության և համերաշխության զգացումները:
10) Ապահովել երիտասարդների ձայնի իրավունքը:
11) Սատարել երիտասարդներին իրենց շրջապատում դրական փոփոխություններ իրականացնելու հարցում:
12) Աջակցել երիտասարդներին՝ իրագործելու իրենց գաղափարներն ու նախաձեռնությունները:
13) Զարգացնել պատասխանատվության, որոշումների մտածված և պատասխանատու կայացման ունակությունները:
14) Աջակցել երիտասարդներին ազդեցություն ձեռք բերելու հարցում:
15) Բարձրացնել երիտասարդների՝ որպես ակտիվ քաղաքացիների դերը:
16) Ստեղծել հնարավորություններ միջհամայնքային և միջազգային երիտասարդական փոխանակումների ու համագործակցության համար:

27. Վերոնշյալ ու հայաստանյան իրականության համար ընտրված այլ հատուկ նպատակներին հարիր պետք է հաջորդ քայլով ընտրվեն մեթոդաբանական այն մոտեցումներն ու տեսությունները, որոնք հիմք պետք է դառնան երիտասարդական միջավայրի ծրագրերի ու միջոցառումների բովանդակության համար:

6. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

28. Երիտասարդական միջավայրի ընդհանուր նպատակներից ելնելով՝ դրանց գործունեության կազմակերպման սկզբունքներն են՝

1) **Երիտասարդակենտրոն մոտեցում՝** երիտասարդներին՝ որպես լավագույն գործընկերների ու շարժիչ ուժի ընդունում, նրանց սուբյեկտայնության բարձրացում, ազատ մտածողության, ինքնուրույնության և անկախության խրախուսում:

2) **Դրական զարգացում՝** աջակցող, ուղղորդող, շահադրդող մոտեցում, երիտասարդների սոցիալական և անձնական զարգացման գերակայության ապահովում, իրենց ուժեղ կողմերն ու ներուժը բացահայտելու, դրանց վրա հենվելու և դրանք զարգացնելու համար երիտասարդներին աջակցում, նախաձեռնողականության խթանում:

3) **Մասնակցայնություն՝** գործունեության բոլոր ոլորտներում ու մակարդակներում որոշումների կայացմանը երիտասարդների ու երիտասարդական ակտիվ խմբերի

ներգրավվածության ապահովում, համաղեկավարման հնարավորությունների ապահովում:

4) **Հասանելիություն, մատչելիություն՝** երիտասարդների համար հնարավորինս նվազագույն մուտքային պահանջների սահմանում և հասանելիության ապահովում:

5) **Ներառականություն՝** յուրաքանչյուր երիտասարդի համար՝ իր առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովում, իրականացվող ծրագրերին առավելագույն մասնակցության ապահովմանն ուղղված քայլերի իրականացում:

6) **Հավասարություն՝** երիտասարդության որևէ մի առանձին խմբի՝ գործունեության ազդեցությունից դուրս թողնելու կամ արտոնյալ համարելու բացառում, ոչ խտրական միջավայրի ապահովում, հավասար մեկնարկային վիճակի բերող համակարգերի ներդրում:

7) **Կարիքահեն մոտեցում՝** երիտասարդական միջավայրի նպատակների, առաջնահերթ աշխատանքների, ծրագրերի և ակնկալվող արդյունքների համապատասխանեցում երիտասարդների իրական կարիքներին ու հնարավորություններին:

8) **Գիտականություն՝** գործունեության պլանավորում և ծրագրերի մշակում հուսալի և արդիական ուսումնասիրությունների, մշտադիտարկումների, գնահատումների, մեթոդաբանությունների և այլ փաստերի ու գիտելիքների հիման վրա, որակի հստակ չափանիշների և ուղենիշների համապատասխան գործունեության ապահովում:

9) **Նորարարություն՝** գործունեության արդյունավետության բարձրացման, առկա և հավանական հիմնախնդիրների համար նոր լուծումների որոնում և ներդրում:

10) **Կայունություն՝** գործունեության պարբերականության, ազդեցության շարունակականության ու կայունության ապահովում:

11) **Չափելիություն՝** գործունեության արդյունքների չափման մեխանիզմների ապահովում:

12) **Կանխարգելում՝** երիտասարդների վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների կանխարգելման, հաղթահարման և/կամ սահմանափակմանն ուղղված միջոցների ու միջոցառումների ապահովում:

13) **Անվտանգություն և պաշտպանություն՝** բոլոր երիտասարդների և աշխատակիցների համար ապահով և աջակցող միջավայրի կազմակերպում:

14) **Համայնքակենտրոն մոտեցում՝** գործունեության մեջ ընտանիքի և համայնքի ներգրավում, երիտասարդների և իրենց ընտանիքների ու համայնքների հետ սերտ համագործակցության ապահովում:

15) **Համագործակցություն՝** երիտասարդության հարցերին առնչվող տարբեր դերակատարների ու գործընկեր կառույցների հետ արդյունավետ համագործակցության ապահովում:

16) **Ապաքարոզչություն՝** երիտասարդների շրջանում քաղաքական, կրոնական կամ այլ գաղափարախոսության և/կամ օրակարգի քարոզչության բացառում:

17) **Թափանցիկություն՝** գործունեության հրապարակայնության, հաշվետվողականության և արդյունքների անկողմնակալ գնահատման ապահովում:

29. Թվարկված սկզբունքների հիման վրա երիտասարդական միջավայր գործարկող յուրաքանչյուր կառույց պետք է մշակի աշխատանքային կանոնակարգեր և աշխատակիցների վարքաննոներ:

7. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

30. Երիտասարդական միջավայրի **առաջնային (անմիջական) շահառուները** երիտասարդներն են՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, ֆիզիկական կարողություններից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

31. Հիմք ընդունելով Հայաստանում երիտասարդական աշխատանքի առկա փորձը՝ շահառուների խմբերի համար կարող է դիտարկվել կլաստերավորման մի քանի տարբերակ.

1) **Ըստ տարիքի՝**
   ա) կրտսեր երիտասարդներ (դեռահասներ)՝ 13-18 տարեկան,
   բ) երիտասարդներ՝ 18-25 տարեկան,
   գ) ավագ երիտասարդներ՝ 25-35 տարեկան:
2) **Ըստ սակավ հնարավորությունների՝** սոցիալապես անապահով երիտասարդներ, սահմանամերձ գյուղերի երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, փախստականներ, սփյուռքահայ երիտասարդներ, ծնողական խնամքից զրկված երիտասարդներ, մանկատների ու խնամքի հաստատությունների սաներ, և այլ տիպի հաստատությունների շահառուներ:
3) **Ըստ կարիքների և հետաքրքրությունների՝** կրթական կարիքներ, զբաղվածություն, ձեռնարկատիրություն, կուսակցական երիտասարդություն, թաղային երիտասարդություն, մարզիկներ, արվեստագետներ, կրոնական խմբեր, առողջ ապրելակերպի շարժման անդամներ, հայորդյաց տների սաներ, ուսանողություն և այլն:

4) **Ըստ աշխարհագրական դիրքի՝** Երևանի առանձին վարչական շրջանների երիտասարդություն, մարզաբնակ երիտասարդություն (գյուղաբնակ և փոքր քաղաքների երիտասարդություն):

32. Յուրաքանչյուր առանձին դեպքում, իր նպատակներից ելնելով, երիտասարդական կոնկրետ միջավայրի համար կարող է ընտրվել կոնկրետ թիրախային խումբ/խմբեր:
33. Շահառուների հետ աշխատելիս կարևոր է հաշվի առնել նաև, որ սովորող և աշխատող երիտասարդների կողքին առկա են մինչև 35 տարեկան չաշխատող և չսովորող երիտասարդներ, որոնց ներգրավումը կարող է առանձնահատուկ մոտեցման անհրաժեշտություն առաջացնել:
34. Չնայած այն հանգամանքին, որ երիտասարդական միջավայրի հիմնական թիրախային խումբը երիտասարդներն են, այն կարող է նաև հանդես գալ որպես համայնքային ռեսուրս կենտրոն համայնքի այլ տարիքային խմբերի համար:
35. Երիտասարդական միջավայրի երկրորդային շահառուներ են երիտասարդների ընտանիքի անդամները, երիտասարդների հետ կամ երիտասարդության ոլորտում աշխատող մասնագետները, ներառյալ՝ երիտասարդական կազմակերպությունների աշխատակիցները, կամավորները, փորձնակները, դպրոցի ուսուցիչները, վարչական աշխատակազմը, սոցիալական աշխատողներն ու հոգեբանները, ոլորտային հետազոտողները, առողջապահական հաստատությունների, իրավապահ մարմինների և հարակից այլ ոլորտների ներկայացուցիչները:

8. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

36. երիտասարդական կենտրոնը երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ ու սկզբունքներով աշխատող երիտասարդական միջավայրն է, որն ունի համապատասխան աշխատակազմ, ֆիզիկական տարածք, նյութատեխնիկական միջոցներ, մատուցում է երիտասարդական ծառայություններ ու իրականացնում է երիտասարդական ծրագրեր:
37. Կենտրոնը կարող է հիմնվել թե՛ որպես առանձին կազմակերպաիրավական ձև ունեցող ինքնուրույն կառույց, թե՛ որպես այլ կազմակերպության ներքին կառուցվածքում գործող միավոր: Երկրորդ դեպքում հիմնադիր («գլխամասային») կազմակերպությունը հանդիսանալու է իր կողմից հիմնադրած կենտրոնի գործունեության պատասխանատուն:
38. Երիտասարդական կենտրոնը կարող է ստեղծվել պետության, կամ համայնքի, կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից, կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ:

9. ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

39. Երիտասարդական կենտրոնի կողմից իրականացվող հիմնական գործառույթներն են՝

1) Շահառուների իրազեկվածության մակարդակի բարձրացում, խորհրդատվություն և ուղղորդում,

2) Կարողությունների բացահայտում ու շարունակական անձնային զարգացում,

3) Ինտելեկտուալ ժամանցի կազմակերպում.

4) Կենտրոնի տարածքից, նյութատեխնիկական ու կրթական միջոցներից օգտվելու հնարավորության տրամադրում:

40. Այս բոլոր գործառույթներն ամբողջական գործընթացի փոխկապակցված և փոխլրացնող տարրեր են, որոնց համընթաց իրականացումը միևնույն կենտրոնում կարող է էականորեն պայմանավորել կենտրոնի առջև դրված նպատակների իրականացումը:

41. Մասնավորապես՝ երիտասարդական կենտրոնը կարող է հանդես գալ որպես «տեղեկատվական հարթակ», իսկ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները կարող են ոչ միայն իրազեկել երիտասարդներին իրենց առնչվող տարատեսակ ու բազմաբովանդակ պետական և ոչ պետական տեղական ու միջազգային ծրագրերի և հնարավորությունների մասին, այլև կարող են զարգացնել նոր գիտելիք ձեռք բերելու նրանց մոտիվացվածությունն ու կարողունակությունը: Իր հերթին, երիտասարդների հետաքրքրությունները և նախասիրությունները բավարարելուց զատ, ժամանցի գրագետ կազմակերպումը կարող է միջոց և խթան հանդիսանալ կենտրոնի գործունեության այլ կարևոր բաղադրիչներում երիտասարդների ներգրավման համար: Կենտրոնի կողմից իրականացվող կարողությունների բացահայտման և զարգացման ծրագրերը կարող են ներառել ոչ միայն փափուկ հմտություններ կամ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման կամ սեփական գործ սկսելու գիտելիքներ ու հմտություններ, այլ նաև զարգացնել նրանց քաղաքացիական կարողունակությունը՝ զարգացնելով քննադատական մտածողությունը, տրամադրելով ակտիվ քաղաքացիության դրսևորման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և արժեհամակարգ:

42. Վերոնշյալ գործառույթները կարող են իրականացվել կենտրոնահեն (կենտրոնի տարածքում իրականացվող աշխատանք) և **արտակենտրոն** (կենտրոնից դուրս շարժական և դեպի խոցելի ու դժվար հասանելի երիտասարդը գնացող՝ աութրիչ աշխատանք) ձևով և ունենալ **մեկանգամյա** կամ **պարբերական** բնույթ:

10. ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

43. Երիտասարդական կենտրոնի գործառույթներն իրականացվում են հետևյալ հիմնական ծառայությունների տրամադրմամբ՝
    1) Իրազեկում՝ հանդիպումների և տեղեկատվական նյութերի միջոցով.
    2) Երիտասարդական համայնքների, այդ թվում՝ առցանց, ստեղծում, զարգացում.
    3) Խորհրդատվություն, ուղղորդում.
    4) Թեմատիկ աշխատարաններ և դասընթացներ.
    5) Քննարկումներ և խոսնակների հյուրընկալում.
    6) Կրթական և թեմատիկ ակումբներ.
    7) Ուսումնաճանաչողական այցեր.
    8) Էքսկուրսիաներ, արշավներ.
    9) Թեմատիկ և հանրային միջոցառումներ.
    10) Ժամանցային և ոչ-ֆորմալ միջոցառումներ.
    11) Համայնքային նախաձեռնություններ, ծրագրեր.
    12) Կամավորական աշխատանքի կազմակերպում, մենթորություն.
    13) Չկազմակերպված ժամանց և աշխատանքային տարածքի տրամադրում:
44. Գործառույթներից բխող ծառայությունները, երիտասարդների կարիքներից ու գործունեության նպատակներից ելնելով, կարող են տրամադրվել և՛ անհատական, և՛ խմբային երիտասարդական աշխատանքի տեսքով:
45. Երիտասարդական կենտրոնն իր գործունեության մեջ երիտասարդների ներգրավման համար կարող է կիրառել մի շարք գործիքներ, ինչպիսիք են կրթական հաստատությունների հետ շարունակական կապը, ՏԻՄ կառույցներում առկա տվյալները, սոցիալական ցանցերը, ՀԼՄ-ները, տեղում գործող քաղաքացիական հասարակության կառույցների, այդ թվում և համայնքային նախաձեռնող խմբերի հետ համագործակցությունը և այլն:
46. Քանի որ երիտասարդական կենտրոնը պետք է ապահովի նաև չաշխատող, չսովորող, կյանքի դժվար իրավիճակներում գտնվող երիտասարդների, այդ թվում և տարբեր ճգնաժամերից (ռազմական գործողություններ, տեղահանություն, բնական աղետներ, համավարակներ և այլն) տուժած, ազդված երիտասարդների ներգրավվածությունը, ուստի առաջարկվում է համագործակցել համայնքում գործող պետական և ոչ պետական կառույցների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ:
47. Կենտրոնը որպես հարթակ կարող է ծառայել նաև թեմատիկ քննարկումների, սեմինարների, դասընթացների անցկացման համար, որոնք ուղղված են

երիտասարդների հետ աշխատող մասնագետների և ոլորտով հետաքրքրվող անձանց կարողությունների զարգացմանը:

48. Կենտրոնի տարածքում՝ շենքի ներսում և բակում, յուրաքանչյուր այցելուի և շահառուի անվտանգության ապահովումը կենտրոնի առաջնային խնդիր-գործառույթներից է: Տարածքի ապահովությունը երաշխավորելու համար պետք է ձեռնարկվեն հետևյալ նվազագույն միջոցները՝

1)Կենտրոնի շենքերի և բակի տարածքում պետք է ապահովվի (տեսա)հսկում, որի մասին այցելուները պետք է իրազեկվեն համապատասխան ցուցանակների միջոցով: Կենտրոնը գործարկող կառույցը տեսագրում կարող է իրականացնել միայն անվտանգության ապահովման նպատակով: Տեսագրությունները կարող են պահպանվել, մշակվել, ինչպես նաև փոխանցվել երրորդ անձանց բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2) Կենտրոնը պետք է ունենա պետական լիազոր մարմնի սահմանած չափորոշիչներին համապատասխանող՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու միջոցներ և անվտանգության ծրագիր, որի հավելված պետք է կազմի նաև կենտրոնի տարածքում փակցված տարհանման պլան-սխեման:

11. ԿԵՆՏՐՈՆԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

49. Երիտասարդական կենտրոնն իր առջև դրված նպատակներին հասնելու համար պետք է ունենա ապահով և բարենպաստ շենքային պայմաններ, գրավիչ ներքին հարդարում, տեխնիկական հագեցվածություն, համացանցի հասանելիություն և հարակից բակային տարածք: Այն պետք է համապատասխանի ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երիտասարդների կարիքներին: Երիտասարդական կենտրոնի աշխատանքային պայմանները պետք է հարմար լինեն գործունեության տարբեր ձևաչափերի, դասընթացների ոչ ֆորմալ մեթոդաբանության, ինչպես նաև սեմինարների և կոնֆերանսների համար: Կենտրոնում պետք է ապահովված լինի դրական, հարմարավետ և ջերմ մթնոլորտ ոչ ֆորմալ կրթության կազմակերպման, ինքնուրույն և խմբային գործունեության կազմակերպման համար:

50. Հայաստանյան առկա փորձից ելնելով՝ երիտասարդական կենտրոնը իր առջև դրված նպատակներին հասնելու համար ցանկալի է, որ ունենա առնվազն 100 քմ մակերես, որտեղ պետք է լինի ինչպես ընդարձակ տարածք միջոցառումների համար, այնպես էլ առանձնացված սենյակներ, որոնք շահագործվելու են և՛ անհատական, և՛ թիմային աշխատանքների համար:

51. Առաջարկվում է շինությունում նախատեսել հետևյալ բաժինները.

1) **Դասընթացների, սեմինարների սենյակ՝** այն կարող է լինել ընդարձակ տարածք՝ ապահովված գույքով (աթոռներ, սեղաններ, մեծ էկրան): Սրահը պետք է հարմարեցված լինի

ինչպես տարբեր դասընթացներ և սեմինարներ անցկացնելու, այնպես էլ կինոդիտումներ կազմակերպելու համար:

2) **Աշխատանքային սենյակ՝** այս սենյակը կարող է լինել «լուռ գոտի» այն երիտասարդների համար, ովքեր օգտագործելու են տարածքը սովորելու կամ աշխատելու նպատակով: Սենյակում պետք է լինեն համակարգիչներ՝ համացանցի մշտական հասանելիությամբ:

3) **Գրադարան՝** պետք է հագեցած լինի ինչպես բոլոր շահառուներին հասանելի ֆիզիկական թարմացվող գրաֆոնդով, այնպես էլ էլեկտրոնային ռեսուրսներով:

4) **Ժամանցի սենյակ՝** պետք է նախատեսվի տարատեսակ խաղերի կազմակերպման համար՝ հագեցած սեղանի և ինտելեկտուալ խաղերով, հնարավորության դեպքում, նաև խաղային էլեկտրոնային տեխնիկայով:

5) **Վարչական սենյակ՝** պետք է նախատեսվի կենտրոնի աշխատակիցների համար՝ հագեցած լինելով առնվազն մեկ համակարգչով, կահույքով՝ սեղան, աթոռ, կողպվող պահարան (կենտրոնի փաստաթղթերի և արժեքավոր իրերի պահպանման համար):

6) **Խոհանոց և սանհանգույց՝** սրանք պետք է հասանելի լինեն ինչպես աշխատակիցների համար, այնպես էլ երիտասարդական միջավայրից օգտվող այլ երիտասարդների համար:

52. Կենտրոնի գործունեության կազմակերպման, միջոցառումների իրականացման, երիտասարդների հետ տարվող աշխատանքների կատարման համար առաջնային է արհեստավարժ և նվիրված աշխատակազմի առկայությունը:
53. Առաջարկվում է ունենալ հիմնական աշխատակազմ՝ ի դեմս կենտրոնի պատասխանատուի (ղեկավարի / համակարգողի) ու երիտասարդական աշխատողների, ինչպես նաև կամավորներ և փորձնակներ՝ ի դեմս համայնքի ակտիվ երիտասարդների:
54. Պարտադիր է ունենալ առնվազն մեկ, իսկ հնարավորության դեպքում երկու և ավելի մշտապես վճարվող երիտասարդական աշխատող, որոնք իրենց գործունեությունը սկսելուց առաջ անցած կլինեն համապատասխան վերապատրաստում և փորձաշրջան:
55. Երիտասարդական աշխատողները մասնագիտական կրթություն ստացած և/կամ վերապատրաստված աշխատակիցներ են, որոնք պետք է հետևեն կենտրոնի կողմից սահմանված մասնագիտական վարքագծի կանոններին և որակի չափանիշներին: Նրանք կարող են իրականացնել անհատական և խմբային երիտասարդական աշխատանքի տարբեր ձևեր ինչպես կենտրոնում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս: Երիտասարդական աշխատողները պատասխանատու են՝
    1) Կենտրոնի ամենօրյա աշխատանքների կազմակերպման համար:
    2) Կենտրոնում ապահով, ոչ խտրական, դրական ու կառուցողական միջավայրի ստեղծման ու պահպանման համար:
    3) Տվյալ համայնքի երիտասարդների կարիքների բացահայտման, գնահատման և դրանց արձագանքելու անհրաժեշտ միջոցների մշակման համար:

4) Երիտասարդների ներգրավման, համախմբման և ինքնակազմակերպման գործընթացի ֆասիլիտացման / համակարգման համար:
5) Առկա ծրագրերի ու հնարավորությունների վերաբերյալ կենտրոնի երիտասարդների իրազեկության բաձրացման համար:
6) Խորհրդատվությունների, ուղղորդումների համար:
7) Կարողությունների զարգացման, մշակութային, մարզական, ժամանցային և այլ միջոցառումների պլանավորման ու իրականացման համար:
8) Կենտրոնի գործունեության տեսանելիության համար:
9) Կենտրոնի կամավորների աշխատանքների համակարգման համար:
10) Կենտրոնի գործունեության ապահովման նպատակով ֆոնդահայթայթմանն աջակցելու համար:
11) Պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ծավալման համար:
12) Գործողությունների պլաններով նախատեսված այլ աշխատանքների իրականացման համար:
13) Կենտրոնի գործառույթների վերաբերյալ միջանկյալ և տարեկան վերջնական հաշվետվությունների կազմման և ներկայացման համար:

56. Վերոնշյալ աշխատանքներին կարող են ներգրավվել նաև կամավորներն ու փորձնակները:
57. Անձնակազմից մեկը պետք է պատասխանատվություն կրի կենտրոնի գործունեության ղեկավարման և վարչական գործերի համակարգման համար:
58. Բոլոր աշխատակիցները, ներառյալ նաև փորձնակներն ու կամավորները, պետք է իրազեկ լինեն երիտասարդների հետ աշխատանքների կազմակերպման սկզբունքներին և վարքագծի կանոններին:
59. Աշխատանքային օրերին՝ երիտասարդական աշխատանքի ծառայությունների տրամադրման ժամերի ընթացքում, կենտրոնում պետք է մշտապես ներկա լինի երկու երիտասարդական աշխատող (հաստիքային մեկ աշխատող ունենալու դեպքում երկրորդ անձը կարող է լինել կամավոր կամ փորձնակ), որոնք երիտասարդներին պետք է ծանոթացնեն կենտրոնում առկա ծառայություններին, կենտրոնից ու ծառայություններից օգտվելու կարգին, ուղղորդեն նրանց և ապահովեն ծառայությունների որակյալ տրամադրումը:

12. ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

60. Կենտրոնը, հաշվի առնելով իր առաջնային շահառու խմբ(եր)ի առանձնահատկությունները, պետք է ունենա երիտասարդական աշխատանքի կազմակերպման մեթոդաբանություն, որը կապահովի երիտասարդների ակտիվ

մասնակցությունը կենտրոնի ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացում, և հիմնված կլինի ոչ ֆորմալ կրթության արժեքների, մոտեցումների ու գործիքակազմի վրա:

61. Աշխատանքի կազմակերպման, վերահսկման ու արդյունավետության գնահատման համար կենտրոնը պետք է ունենա գործունեության տարեկան կամ կիսամյակային պլան՝ յուրաքանչյուր գործողության կամ ծրագրի համար առանձնացված չափելի ցուցիչներով, ստուգման միջոցներով, սահմանված ժամկետներով, պարբերականությամբ, պատասխանատուներով ու անհրաժեշտ ռեսուրսներով:
62. Կենտրոնի գործունեությունը պետք է լինի պարբերական ու կանխատեսելի՝ ունենալով հստակ սահմանված շաբաթական կամ ամսական ժամատախտակ, որի ցանկացած փոփոխության մասին շահառու երիտասարդները պետք է տեղեկացվեն պատշաճ կերպով: Նախընտրելի է, որ կենտրոնը բաց լինի հնարավորինս երկար՝ տարբեր օրերի երիտասարդներին տրամադրելով շաբաթական միջինում 20 ժամ ծառայություն: Երիտասարդական կենտրոնի աշխատանքային ժամերը կարող են տարբեր լինել, բայց առաջարկվում է, որ դրանք չսահմանափակվեն ստանդարտ աշխատանքային օրացույցով և ժամային գրաֆիկով՝ սովորող և աշխատող երիտասարդների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով:
63. Կենտրոնի տարածքն ու ռեսուրսները կարող են օգտագործվել սոցիալական ձեռնարկատիրության նպատակներով, ինչպես նաև տրամադրվել այլ անձանց և կազմակերպությունների՝ մասնագիտական դասընթացներ և հանդիպումներ անցկացնելու համար: Հյուրընկալվող միջոցառումները պետք է բխեն կենտրոնի գործունեության նպատակներից ու սկզբունքներից և կազմակերպվեն կենտրոնի տարածքից և ծառայություններից օգտվելու կանոններին համաձայն: Կենտրոնի տարածքն ու ռեսուրսները կարող են տրամադրվել ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով:

13. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

64. Երիտասարդական տարածքը երիտասարդական աշխատանքի սկզբունքներով գործող միջավայրն է, որն ունի անվտանգ ու գրավիչ ֆիզիկական տարածք, նյութատեխնիկական միջոցներ, ակտիվորեն աջակցում ու նպաստում է երիտասարդության գործունեությանը՝ ապահովելով բավարար պայմաններ ու հնարավորություններ:
65. Երիտասարդական տարածքը կարող է ստեղծվել պետության կամ համայնքի, կամ ոչ պետական կազմակերպության կողմից, կամ նրանց միջև երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ: Կարող է չունենալ իրավական կարգավիճակ և գործել հանրային նշանակության որևէ վայրում: Կարող է տեղակայված լինել ինչպես միայն իր

համար նախատեսված վայրում, այնպես էլ՝ պետական, համայնքային կան ոչ պետական կազմակերպության որևէ գործող տարածքում:

66. Սովորաբար, այս տարածքներն ապահով, գրավիչ, ներառող ու մատչելի միջավայր են, որտեղ երիտասարդները գտնում են ոգեշնչում, ստեղծագործելու, գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու, շփվելու, խաղալու ու զվարճանալու հնարավորություններ: Երիտասարդական տարածքները զերծ են բոլոր տեսակի բռնություններից, ալկոհոլից, թմրանյութերից և այլ բացասական գործոններից: Սովորաբար երիտասարդներն այս տարածքներն իրենցն են համարում, իրենք են այստեղ որոշումներ կայացնում, ինքնակազմակերպվում ու գործողություններ իրականացնում:

14. ՏԱՐԱԾՔԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

67. Երիտասարդական տարածքի կողմից իրականացվող հիմնական գործառույթներն են՝

1) Երիտասարդների գաղափարների, նախաձեռնությունների իրականացման համար միջավայրի ապահովում:
2) Երիտասարդների ինքնազարգացման և ժամանցի համար միջավայրի ապահովում:
3) Երիտասարդական ծրագրերի, միջոցառումների անցկացում:
4) Տարածքի, նյութատեխնիկական ու կրթական միջոցների ապահովում:

68. Վերոնշյալ գործառույթների տեսանկյունից այս տարածքները, հաճախ, ներկայանում են որպես երիտասարդական ռեսուրս կենտրոն և հարթակ: Գործառույթները կարող են ունենալ **մեկանգամյա** կամ **պարբերական** բնույթ:

15. ՏԱՐԱԾՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

69. Երիտասարդական տարածքի գործառույթներն իրականացվում է հետևյալ հիմնական ձևերով՝

1) Ինքնակրթվելու, հմտանալու, ստեղծագործելու, զվարճանալու ու խաղալու համար երիտասարդներին աշխատանքային ու ժամանցային տարածքների, նյութերի ու տեխնիկական միջոցների տրամադրում:
2) Իրազեկում, խորհրդատվություն, ուղղորդում:
3) Երիտասարդական համայնքների, այդ թվում՝ առցանց, ստեղծում, զարգացում,
4) Գաղափարների, նախաձեռնությունների, միջոցառումների իրականացման համար երիտասարդներին ռեսուրսների ու աջակցության տրամադրում:
5) Երիտասարդների ներգրավմամբ տարատեսակ ծրագրերի, միջոցառումների, դասընթացների, հանդիպումների, հավաքների կազմակերպում և իրականացում:

6) Համայնքային խմբերին, երիտասարդների հետ աշխատող մասնագետներին, երիտասարդական կազմակերպություններին, պետական, ՏԻՄ և մասնավոր կառույցներին իր տարածքում՝ իր նպատակներին համահունչ ծրագրեր, միջոցառումներ, դասընթացներ, հանդիպումներ, հավաքներ կազմակերպելու ու իրականացնելու հնարավության տրամադրում:

70. Տարածքում՝ շինություն(ներ)ում, բացօթյա հատվածում անվտանգության ապահովումը տարածքի կազմակերպչի առաջնային խնդիր-գործառույթներից է:

71. Տարածքի ապահովությունը երաշխավորելու համար պետք է ձեռնարկվեն հետևյալ նվազագույն միջոցները՝

1) Տարածքը պետք է ունենա շահագործման կանոններ և ընթացակարգ, որի վերահսկումը պետք է իրականացնի տարածքի կազմակերպիչը:

2) Տարածքում պետք է ապահովվի (տեսա)հսկում, որի մասին այցելուները պետք է իրազեկվեն համապատասխան ցուցանակների միջոցով: Տարածքը գործարկող կառույցը տեսագրում կարող է իրականացնել միայն անվտանգության ապահովման նպատակով: Տեսագրությունները կարող են պահպանվել, մշակվել, ինչպես նաև փոխանցվել երրորդ անձանց բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) Տարածքը պետք է ունենա պետական լիազոր մարմնի սահմանած չափորոշիչներին համապատասխանող՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու միջոցներ, որի հավելված պետք է կազմի նաև համապատասխան տեղերում փակցված տարհանման պլան-սխեման:

16. ՏԱՐԱԾՔԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

72. Երիտասարդական տարածքն իր առջև դրված նպատակներին հասնելու համար ցանկալի է, որ ունենա առնվազն 60 քմ մակերես (ցանկալի է՝ առանձնացված մուտքով և հարակից բակային տարածքով), գրավիչ ներքին հարդարում, տեխնիկական հագեցվածություն, համացանցի հասանելիություն:

73. Այն պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող երիտասարդների կարիքներին: Երիտասարդական տարածքի աշխատանքային պայմանները պետք է հարմար լինեն գործունեության տարբեր ձևաչափերի համար: Այստեղ պետք է լինի ընդարձակ տարածք ինչպես միջոցառումների համար, այնպես էլ անհատական և խմբային գործունեության համար:

74. Առաջարկվում է շինությունում նախատեսել նվազագույն հետևյալ բաժինները՝

1) **Ընդարձակ սենյակ.** այն կարող է լինել բաց տարածք՝ ապահովված կահույքով (աթոռներ, սեղաններ, պահարաններ, գրադարակ և այլն): Սրահը պետք է հարմարեցված լինի ինչպես տարբեր դասընթացներ և սեմինարներ անցկացնելու, այնպես էլ կինոդիտումներ, տարատեսակ խաղեր կազմակերպելու համար: Սենյակում

կարող են լինել մեծ էկրան, համակարգիչներ՝ համացանցի մշտական հասանելիությամբ, տպիչ, սեղանի ու ինտելեկտուալ խաղեր, հնարավորության դեպքում նաև խաղային էլեկտրոնային տեխնիկա և այլն:

2) Տարածքի որևէ տեսանելի հատվածում պարտադիր պետք է լինի **ժամատախտակ՝** ցանկալի է նաև առցանց տարբերակով, որը պետք է տարածքի գործունեությանը համապատասխան անընդհատ թարմացվի:
3) **Գրադարան՝** ցանկալի է, որ հագեցած լինի ինչպես բոլոր շահառուներին հասանելի ֆիզիկական թարմացվող գրաֆոնդով, այնպես էլ էլեկտրոնային ռեսուրսներով:
4) **Խոհանոցային հատված և սանհանգույց՝** սրանք պետք է ապահովված լինեն նվազագույն գույքով ու տեխնիկայով, հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, և ազատ հասանելի լինեն երիտասարդական տարածքից օգտվող երիտասարդների ու հյուրերի համար:

75. Պետք է լինի առնվազն մեկ աշխատակից՝ տարածքի պատասխանատու (համակարգող), ով պարտադիր չէ, որ մշտապես գտնվի տարածքում: Տարածքի պատասխանատուի / համակարգողի աշխատանքային պարտականությունները պետք է սահմանված լինեն տարածքը գործարկող կառույցի հետ կնքված վճարովի կամ կամավոր աշխատանքի պայմանագրով:
76. Երիտասարդական տարածքի պատասխանատուն (համակարգողը) պատասխանատու է՝
    1) Տարածքի ամենօրյա հասանելիության ապահովման համար.:
    2) տարածքում ապահով, ոչ-խտրական, դրական ու կառուցողական միջավայրի ստեղծման ու պահպանման համար.
    3) Երիտասարդների ներգրավման, համախմբման և ինքնակազմակերպման գործընթացի ֆասիլիտացման համար:
    4) Երիտասարդության հարցերին առնչվող տեղեկությունների հավաքագրման ու տրամադրման, խորհրդատվության ու ուղղորդման համար:
    5) Կարողությունների զարգացման, մշակութային, մարզական, ժամանցային և այլ միջոցառումների պլանավորման և իրականացման համար:
    6) Տարածքի կամավորների ու փորձնակների աշխատանքների համակարգման համար:
    7) Պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ծավալման համար:
    8) Տարածքի գործունեության տեսանելիության ու հաշվետվողականության համար:
77. Վերոնշյալ աշխատանքներին կարող են ներգրավվել նաև կամավորներ ու փորձնակներ:
78. Խիստ ցանկալի է, որ տարածքի պատասխանատուն (համակարգողը) վերապատրաստված լինի որպես երիտասարդական աշխատող: Տարածքի պատասխանատուն (համակարգողը), ինչպես նաև փորձնակներն ու կամավորները

պետք է իրազեկ լինեն երիտասարդների հետ աշխատանքների կազմակերպման սկզբունքներին և վարքագծի կանոններին:

17. ՏԱՐԱԾՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

79. Տարածքի գործունեության կազմակերպումն ու մեթոդաբանությունը բխում են տվյալ համայնքի կողմից սահմանած երիտասարդական քաղաքականության առաջնահերթություններից, շահառու խմբ(եր)ի առանձնահատկություններից, համայնքում երիտասարդներին հասանելի այլ հնարավորություններից, որոնք պետք է լրացնի տարածքը:
80. Անկախ տարածքի աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններից՝ դրա գործունեությունը պետք է հիմնված լինի երիտասարդական աշխատանքի արժեքների ու սկզբունքների վրա, ապահովի երիտասարդների ակտիվ մասնակցությունը տարածքի գործարկման, ծրագրերի ու միջոցառումների մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեջ, և հիմնված կլինի ոչ ֆորմալ կրթության արժեքների, մոտեցումների ու գործիքակազմի վրա:
81. Աշխատանքների կազմակերպման, վերահսկման ու արդյունավետության գնահատման համար տարածքը պետք է ունենա գործունեության տարեկան կամ կիսամյակային պլան և բյուջե: Յուրաքանչյուր գործողության կամ ծրագրի իրականացումից առաջ պետք է սահմանվեն հստակ արդյունքներ՝ առանձնացված չափելի ցուցիչներով ու ստուգման միջոցներով, սահմանվեն ժամկետներ կամ պարբերականություն, պատասխանատուներ ու անհրաժեշտ ռեսուրսներ: Սակայն պլանավորումը և ցուցիչները պետք է լինեն հնարավորինս ճկուն՝ հաշվի առնելով այն, որ գործողությունների ու ծրագրերի կազմակերպումն ու բովանդակությունը կախված է լինելու շահառու երիտասարդների առաջարկներից, նախաձեռնություններից կամ այլ շահագրգիռ կողմերի ու դերակատարների հետ հնարավոր համագործակցություններից:
82. Տարածքի գործունեությունը պետք է լինի թափանցիկ ու կանխատեսելի՝ համաձայն ժամանակացույցի, որը տպագիր կամ էլեկտրոնային տեսքով և շահառուների համար հասկանալի ու մատչելի լեզվով պետք է ներառի տեղեկատվություն ընթացիկ ծրագրերի կամ գործողությունների մասին, սահմանի տարածքից օգտվելու համար ազատ ժամերը, տարածքից օգտվելու կարգը, կանոնները և այլն:
83. Տարածքը պետք է հնարավոր լինի բացել ու օգտագործել շաբաթվա տարբեր օրերի ու օրվա տարբեր ժամերի: Այն չպետք է սահմանափակվի ստանդարտ աշխատանքային օրացույցով և ժամային գրաֆիկով՝ սովորող և աշխատող երիտասարդների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով: Երիտասարդները պետք է հնարավորություն ունենան նաև ինքնուրույն մուտք գործելու տարածք և

ինքնակազմակերպելու իրենց գործունեությունը: Այդ նպատակով պետք է նախապես սահմանված լինեն տարածքի մուտքի և ելքի հստակ պայմաններ ու կանոններ, պետք է վարվի տարածքի մուտքի բանալիների օգտագործման հաշվառում:

84. Տարածքն ու ռեսուրսները կարող են օգտագործվել նաև սոցիալական ձեռնարկատիրության նպատակներով, ինչպես նաև տրամադրվել այլ անձանց և կազմակերպությունների՝ մասնագիտական դասընթացներ և հանդիպումներ անցկացնելու համար՝ ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Հյուրընկալվող միջոցառումները պետք է բխեն տարածքի գործունեության նպատակներից ու սկզբունքներից և կազմակերպվեն տարածքից օգտվելու կանոններին համաձայն:

18. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

85. Երիտասարդական միջավայրի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել տվյալների պարբերական հավաքագրում ու աշխատանքի որակի մշտադիտարկում:

86. Տվյալների հավաքագրումն ու կառավարումը պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու տվյալ միջավայրը գործարկող կառույցի ներքին քաղաքականություններին համապատասխան և այդ կառույցի անմիջական հսկողությամբ:

87. Միջավայրն ի սկզբանե պետք է իր համար մշակի տվյալների հավաքագրման հատուկ համակարգ, որը պետք է նախանշի հաճախող երիտասարդների տվյալների հավաքագրման մեթոդները և գործիքները, ինչպես նաև տվյալների մշակման, գաղտնիության ու պահպանման մեխանիզմները: Հավաքագրված տվյալները պետք է մշակվեն ու օգտագործվեն միայն միջավայրի գործունեության շրջանակներում՝ բացառապես տվյալների հավաքագրման համակարգում նշված նպատակների սահմաններում:

88. Միջավայր այցելող մինչև 16 տարեկան անչափահասների համար պետք է սահմանվի հատուկ աշխատանքային կանոնակարգ: Կենտրոնների դեպքում՝ անչափահաս երիտասարդի մուտքը կենտրոն հնարավոր է ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ:

89. Տվյալների հավաքագրումն ունի մի քանի նպատակ՝ հնարավորինս մեծ դրական ազդեցություն ունենալ երիտասարդների զարգացման վրա, և համոզված լինել, որ իրականացվող ծրագրերը արդյունավետ են ու համապատասխանում են երիտասարդների կարիքներին:

90. Տվյալների հավաքագրումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) Երիտասարդության կարիքների (այդ թվում՝ հնարավորությունների, ակնկալիքների ու ձգտումների) գնահատում՝ հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների և հանրային հարցման այլ միջոցներով հստակ պարզել տեղի երիտասարդների կարիքները և տվյալ համայնքի առանձնահատկությունները:
2) Մեթոդաբանության մշակում՝ կարիքների գնահատման հիման վրա նախատեսվող միջոցառումների ու ծրագրերի բովանդակության մեթոդաբանություն:
3) Առանցքային ցուցիչների սահմանում՝ մշակված մեթոդաբանության հիման վրա միջավայրը սահմանում է տարեկան կատարողականի ցուցիչներ: Պարտադիր ցուցանիշներ են՝

ա) տարեկան պասիվ շահառուների քանակ (տարեկան պասիվ շահառուներն են այն երիտասարդները, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել են երիտասարդական միջավայրի մինչև որոշակի թվով նախաձեռնություններին),

բ) տարեկան ակտիվ մասնակից շահառուների քանակ (տարեկան ակտիվ շահառուներն են տարեկան կտրվածքով որոշակի ինտենսիվությամբ միջավայր այցելած երիտասարդները),

գ) միջավայրի գործունության ուղղություններով տարեկան միջոցառումների քանակը,

դ) որակային աճի ցուցանիշները, որոնք չափվում են մուտքային և ելքային հարցումների միջոցով:

4) Առանցքային կատարողականի ցուցանիշները պետք է մշակել՝ հաշվի առնելով տվյալ համայնքում երիտասարդների քանակը, երիտասարդների նախնական ակտիվությունը, տվյալ համայնքի աշխարհագրական դիրքը, բնորոշ հատկանիշները, սոցիալ-տնտեսական վիճակը և այլ էական առանձնահատկությունները:
5) Որակի ընթացիկ գնահատում՝ սա արվում է չափելու համար իրականացվող ծրագրերի արդյունավետությունը և դրանց ազդեցությունը մասնակից երիտասարդների վրա: Այդ նպատակով պետք է իրականացնել հարցումներ և հարցազրույցներ: Յուրաքանչյուր շահառուի հետ պետք է իրականացվի 3 հարցազրույց կամ հարցում՝ ա) մուտքային հարցումներ, որով պետք է չափել երիտասարդի կարողությունները և գիտելիքները ծրագրերին մասնակցություն ունենալուց առաջ, բ) ընթացիկ հարցումներ, որի նպատակը երիտասարդի ընթացիկ առաջընթացի գնահատումն է, գ) ելքային հարցումներ, որոնք իրականացվում են երիտասարդի հետ աշխատանքներ իրականացնելուց և նրան նախաձեռնություններում ներգրավելուց հետո: Այս հարցման նպատակն է պարզել միջավայրի աշխատանքի արդյունքը և ազդեցությունը երիտասարդի զարգացման վրա: Նախաձեռնությունը համարվում է հաջողված, եթե ելքային հարցման արդյունքը մուտքային հարցման արդյունքից մեծ է մեկով:

6) Մշտադիտարկում և գնահատում՝ մշտադիտարկման շրջանակում երիտասարդական միջավայրը պատրաստում է հաշվետվություններ (որակական և քանակական տվյալների ներգրավմամբ) միջավայրի ընդհանուր գործունեության, ընթացիկ նախաձեռնությունների և դրանց արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև վերլուծական տվյալներ համայնքի երիտասարդության վերաբերյալ:

91. Երիտասարդական միջավայրն՝ իր գործունեության լուսաբանման և հանրայնացման նպատակներով կարող է հրապարակումներ կատարել թերթերում, թռուցիկներում, սոցցանցերում, կայքերում և այլ տպագիր ու թվային միջոցներում:
92. Հրապարակումներում կարող են օգտագործվել երիտասարդների և այցելուների լուսանկարներ ու նրանց մասնակցությամբ տեսանյութեր, ինչպես նաև շահառուներից հավաքագրված տվյալներ՝ ընդհանրացված, անանուն կերպով:
93. Երիտասարդների կողմից հաճախումների, իսկ այցելուների կողմից գրանցման թերթիկների լրացումը համարվում է որպես լուսաբանման վերաբերյալ պատշաճ իրազեկման գործողություն, իսկ դրանք լրացնելիս համապատասխան դաշտում նշումն անելու փաստը՝ լուսաբանման պայմանի հետ համաձայնություն:

19. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

94. Երիտասարդական միջավայրի գործունեության հաջողության և գործարկման ծախսարդյունավետության առանցքային պայման է առավելագույն թվով երիտասարդների ներգրավումը, ինչն ինքնին ենթադրում է, որ երիտասարդական միջավայրը պետք է բաց և հասանելի լինի տվյալ համայնքի բոլոր երիտասարդների համար՝ մատուցելով առավելագույն թվով անվճար ծառայություններ: Այս հանգամանքը կարող է խնդրահարույց լինել, քանի որ երկարաժամկետ կտրվածքով իր գործունեության ապահովման համար միջավայրը կարիք է ունենալու ֆինանսական հոսքերի ապահովման:

20. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ

ՁԵՎ 1

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ*

N	Ամսաթիվ	Անուն	Ազգանուն	Կազմակերպություն	Հեռախոս / էլ. փոստ	Մեկնաբանություններ (այցի նպատակը)	Ստորագրություն

** Երիտասարդական միջավայրի գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ այցելուների գրանցման առանձին թերթիկի կարիք կարող է նաև չլինել: Իսկ թերթիկի դաշտերը կարող են փոփոխվել՝ ավելանալ կամ պակասել՝ կախված այցի նպատակից, ծրամաբանությունից:*

ՁԵՎ 2

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ*

N	Համա թիվ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	Հեռախոս / էլ. փոստ	Մուտքի/ելքի ժամեր		Ստորագրություն

** Երիտասարդական միջավայրի գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ գրանցման դաշտերը կարող են փոփոխվել՝ ավելանալ կամ պակասել: Հնարավոր է նաև ունենալ տարբերակված գրանցման թերթիկներ առաջին անգամ այցելող և մշտապես այցելու երիտասարդների համար, շարունակաբար լրացվող թերթիկներ պարբերական միջոցառումների համար, առանձին օրերով թվակալված թերթիկներ և այլն:*

ՁԵՎ 3

ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Կենտրոնի / տարածքի գործունեության համառոտ նկարագիր

ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ _____

(անուն, ազգանուն, հայրանուն,, անձնագրի տվյալներ, բնակության հասցե

Համաձայն եմ, որ երեխաս՝ _____

(անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի)

հաճախի ***«Կենտրոնի / տարածքի անվանումը»*** և, որ **Կենտրոնի / տարածքի** ներկայացուցիչները կարող են լուսանկարել, տեսանկարահանել երեխային և հրապարակել դրանք ***«Կենտրոնի / տարածքի անվանումը»*** հետ կապված հանրային հրապարակումներում (թվային և տպագիր):

Պարտավորվում եմ նաև, ըստ անհրաժեշտության, տրամադրել երեխայի առողջական վիճակին վերաբերող տեղեկություններ՝ կենտրոնում աշխատանքներն ավելի անվտանգ և նպատակային կազմակերպման համար:

Օրինական ներկայացուցիչ՝ _____

(անուն ազգանուն, ազգակցական/ իրավական կապը երեխայի հետ)

Ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Հեռախոսահամար՝ _____

ՁԵՎ 4

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Ինքնագնահատման գործիք

Ունակությունների առկայությունը գնահատել չորս բալային սանդղակում, որտեղ 1-ը՝ չունեմ այդ ունակությունը, 2-ը՝ ցածր է, 3-ը՝ բավարար է, 4-ը՝ գերազանց է:

Գործառույթ 1. Աշխատանք երիտասարդների կարիքների և ակնկալիքների հետ

<u>ԵԱ ունակությունները</u>	
1.1 Երիտասարդների հետ դրական, քննադատելուց զերծ հարաբերությունների կառուցման ունակություն	
1.2 Երիտասարդների կյանքի սոցիալական համատեքստի ընկալման ունակություն	
1.3 Երիտասարդական աշխատանքի պլանավորման, իրագործման և գնահատման մեջ համապատասխան մեթոդներով երիտասարդների մասնակցության ապահովման ունակություն	
1.4 Երիտասարդներին որպես հավասար ընկալելու ունակություն	
1.5 Երիտասարդական աշխատանքի համատեքստում երիտասարդների անձնային և հուզական խնդիրների քննարկման և լուծման ուղիների մշակման ունակություն	
1.6 Երիտասարդների մոտ ինքնագնահատման, հավասարը-հավասարին գնահատման (փոխգնահատման) և երևույթների/գործընթացների գնահատման ունակությունների զարգացում	

Գործառույթ 2. Երիտասարդների համար որակյալ ուսուցման հնարավորությունների ապահովում

<u>ԵԱ ունակությունները</u>	
2.1 Երիտասարդներին սեփական ուսուցողական կարիքների, ոճերի գիտակցման, զարգացման և ինքնազարգացման գործընթացների պլանավորման գործում աջակցելու ունակություն՝ հաշվի առնելով ամեն մեկի յուրահատկությունները	
2.2 Անհատների ու խմբերի համար ապահով, շահադրդող և ներառող ուսուցողական միջավայրի ստեղծման ունակություն	

2.3 Ուսուցման հանդեպ շահադրդմանը և ստեղծարարության զարգացմանը միտված տարաբնույթ կրթական մեթոդների օգտագործման ունակություն	
2.4 Երիտասարդներին համապատասխան և պատշաճ ուղղորդման և հետադարձ կապ տալու ունակություն	
2.5 Երիտասարդներին կրթական հնարավորությունների մասին իրազեկելու և դրանցից օգտվելուն աջակցելու ունակություն	
2.6 Ուսուցողական համատեքստի և դրանից դուրս երիտասարդի առօրյա կյանքի կապի/զուգահեռների գիտակցման բարձրացման ունակություն	

Գործառույթ 3. Աջակցություն և զորակցում երիտասարդներին՝ իրենց սոցիալական միջավայրն ավելի լավ պատկերացնելու և դրանում իրենց մասնակցության խթանման համար

<u>ԵԱ ունակությունները</u>	
3.1 Ունակություն՝ օգնելու երիտասարդներին հասկանալու և համայնքում իրենց դերի հետ կապված պատասխանատվություն վերցնելու կարևորությունը	
3.2 Ունակություն՝ աջակցելու երիտասարդներին սոցիալական փոփոխություններ բերող նպատակներ, գործելու ռազմավարություններ սահմանելուն և կազմակերպելու անհատական ու խմբային գործողություններ	
3.3 Ունակություն՝ աջակցելու երիտասարդներին քննադատական մտածողության շնորհիվ զարգացնել սոցիալական և քաղաքական համակարգերի աշխատանքի հետ կապված գիտելիքները, գտնել դրանց վրա ազդեցության հնարավորություններ	
3.4 Երիտասարդների ինքնավստահության և կարողությունների զարգացմանն աջակցելու ունակություն	
3.5 Խնդիրները որպես մարտահրավերներ դիտարկելու և դրանց արդյունավետ լուծումներ գտնելու կարողության զարգացման ունակություն	
3.6 Երիտասրանդների մոտ մտածելու և գիտակցելու (ընկալելու, վերլուծելու, քննադատելու, համադրելու, սինթեզելու, եզրահանգելու, հետևություններ անելու և այլ) կարողությունների զարգացման ունակություն	

Գործառույթ 4. Երիտասարդներին ակտիվորեն և կառուցողական կերպով միջմշակութային հարաբերություններում ներգարվվելու աջակցություն

<u>ԵԱ ունակությունները</u>

4.1 Երիտասարդների մոտ միջմշակութային ունակությունների զարգացմանը սատարելու ունակություն	
4.2 Երիտասարդների համար տարբեր մշակութային համատեքստերից եկած մարդկանց հետ շփումների, ուսուցման, մշակութային իրազեկման հնարավորությունների ստեղծման ունակություն	
4.3 Կոնֆլիկտների հետ կառուցողական աշխատանքի և դրանց փոխակերպմանն ուղղված աշխատանքի ունակություն	
4.4 Տարբեր մշակութային համատեքստերից երիտասարդների՝ երիտասարդական աշխատանքի տարբեր միջոցառումներում ակտիվ ներառման ունակություն	
4.5 Անձնական, խմբային և ազգային մշակութային ինքնության գիտակցմանն աջակցելու ունակություն	
4.6 Համայնքի, երկրի և գլոբալ մակարդակներում առկա միջմշակութային խնդիրների գիտակցմանն աջակցելու ունակություն	

Գործառույթ 5. Իրականացրած երիտասարդական աշխատանքի որակի բարելավման նպատակով գնահատման գործիքների ակտիվ օգտագործում

<u>ԵԱ ունակությունները</u>	
5.1 Գնահատման գործընթացի պլանավորման և իրականացման մեջ երիտասարդների մասնակցության ապահովման ունակություն	
5.2 Մասնակցային գնահատման գործընթացների պլանավորման և իրականացման մեթոդների իմացություն և կիրառում	
5.3 Սեփական աշխատանքի բարելավման մեջ գնահատման արդյունքների օգտագործման ունակություն	
5.4 Երիտասարդների իրավիճակի և կարիքների վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրությունների մասին իրազեկություն	

Գործառույթ 6. Թիմերում համատեղ ուսուցմանը սատարում

<u>ԵԱ ունակությունները</u>	
6.1 Թիմային աշխատանքի գնահատման և դրա արդյունքների օգտագործմամբ աշխատանքի բարելավման ունակություն	
6.2 Թիմում հետադարձ կապ տալու և ստանալու ունակություն	

6.3 Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ ակտուալ տեղեկատվության և օրինակների մասին գործընկերների հետ փոխանակվելու ունակություն	
6.4 Թիմային աշխատանքի սկզբունքները, ոճերը և թիմում անդամների դերերը հասկանալու և թիմային դինամիկայի հետ աշխատելու ունակություն	

Գործառույթ 7. Սեփական կազմակերպությունների զարգացմանն աջակցում և երիտասարդական ծրագրերի ու քաղաքականության բարելավում

<u>ԵԱ ունակությունները</u>	
7.1 Կազմակերպության ներքին կանոնակարգերի և ծրագրերի մշակման գործընթացում երիտասարդների ակտիվ ներգրավման ունակություն	
7.2 Երիտասարդական քաղաքականության մշակման նպատակով այլ մարմինների հետ համագործակցության ունակություն	

Գործառույթ 8. Ծրագրերի մշակում, իրականացում և գնահատում

<u>ԵԱ ունակությունները</u>	
8.1 Ծրագրերի կառավարման մոտեցումների օգտագործման ունակություն	
8.2 Միջոցների հայթայթման և դրանց արդյունավետ կառավարման ունակություն	
8.3 Տարբեր թիրախային լսարանների համար ծրագրերի մասին նյութերի, հաշվետվությունների, ներկայացումների պատրաստման ունակություն	
8.4 Ըստ անհրաժեշտության տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման ունակություն	

Գործառույթ 9. Երիտասարդների հոգևոր և անձնային զարգացման խթանում

<u>ԵԱ ունակությունները</u>	
9.1 Սեփական մշակութային ժառանգության կարևորության գիտակցման և փոխանցման ունակություն, հայրենասիրության գաղափարների կառուցողական փոխանցման ունակություն	
9.2 Երիտասարդների անձնային աճի ու զարգացման հնարավորությունների իրազեկվածություն, դեպի համապատասխան ոլորտներ և կառույցներ ուղղորդման ունակություն	

9.3 Անձնային և հոգևոր զարգացման ոլորտի մասին հստակ պատկերացումներ	
9.4 Հստակ արժեքային համակարգի առկայություն և տարբեր արժեքային համակարգերի հետ աշխատանքի ունակություն	

Որո՞նք են բացահայտված ուժեղ կողմերը և ի՞նչ կարելի է անել դրանք ավելի ակտիվ կիրառելու համար:

Որո՞նք են բացահայտված թույլ կողմերը և ի՞նչ կարելի է անել դրանք բարելավելու համար:

Այլ նշումներ

Անձնական տվյալներ

Թերթիկը լրացնողի անունն ու ազգանունը	

Թերթիկի լրացման ամսաթիվը	
Մենթորի կամ զրուցակցի անունն ու ազգանունը, եթե առկա է	

ՁԵՎ 5

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՁԵԱՆՄՈՒՇ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ *ՏԱՐԵԹԻՎ*				
ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	**ԱՐԴՅՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻՎՈՐԵՆ ՉԱՓԵԼԻ ՑՈՒՑԻՉ (օրինակներ*)**	**ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**	**ՆՇՈՒՄՆԵՐ**
Միջավայրի գործունեության վերջնանպատակ	Շահառուների թիվ			
	Այլ՝ օբյեկտիվորեն չափելի ցուցիչներ			
ՆՊԱՏԱԿՆԵՐ	**ՑՈՒՑԻՉՆԵՐ (օրինակներ)**	**ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**	**ՆՇՈՒՄՆԵՐ**
Նպատակ 1.	1.1 Որակական ցուցիչ - % Վարքի փոփոխություն			
	1.2 Որակական ցուցիչ - % Գենդերային բաշխում			
	1.3 Որակական ցուցիչ - % Վերադարձող շահառուներ			
Նպատակ 2.	2.1 Որակական ցուցիչ - %			
	2.2 Որակական ցուցիչ - %			
	2.3 Որակական ցուցիչ - %			
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	**ՑՈՒՑԻՉՆԵՐ (օրինակներ)**	**ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**	**ՆՇՈՒՄՆԵՐ**
Ակնկալվող արդյունք 1.	1.1 X ժամ մատուցված ծառայություն (առանձնացնել ըստ տեսակների)			
	1.2 X ժամ իրականացված Y տեսակի միջամտություն			

	(ակումբ, դասընթաց, աշխատարան)			
	1.3 X անգամ իրականացված Y տեսակի միջամտություն (կինոդիտում, միջոցառում, ուսումնական այց, արշավ)			
	1.4 X թվով Y տեսակի գույքի առկայություն (գրադարան, խաղեր)			
	1.5			
Ակնկալվող արդյունք 2.	2.1 X թվով կամավորի ներգրավում			
	2.2 X թվով նախաձեռնությունների իրականացում			
	2.2 X դրամի ենթադրամաշնորհի տրամադրում			
	2.3 X հրապարակում սոցիալական մեդիայում Y հաճախականությամբ			
	2.4			

** Օրինակելի ձևի մեջ օգտագործված ցուցիչները դիտարկել բացառապես որպես օրինակներ և ոչ թե պարտադիր ցուցիչներ: Դրանք այս օրինակելի ձևի մեջ ներառված են ցուցիչների բազմազանությունը ցուցադրելու համար, սակայն չեն կարող համարվել համապարփակ ցանկ և կախված են բացառապես կոնկրետ երիտասարդական միջավայրում իրականացվող միջամտության տրամաբանությունից:*